



«ՆՈՐ ՍԵՂՈՆՆ» «NEW GENERATION»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ HUMANITARIAN NGO

12

Դեկտեմբերի 1, 2015

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ



ՁԻԱՅ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1





ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Հազարավոր մարդիկ մահանում են ՁԻԱՀ-ից, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ պիտակավորվում են հասարակության կողմից, շատերը իրենց ՄԻԱՎ կարգավիճակը թաքցնելու համար չեն ստանում համապատասխան բժշկական օգնություն: ՄԻԱՎ-ի դեմ պայքարի լավագույն միջոցը ճիշտ տեղեկատվությունն ստանալն ու կրթվելն է: ՄԻԱՎ-ը տարիք, սեռ, ռասսա, կրոն, սոցիալական կարգավիճակ չի հարցնում. ոչ ոք ապահովագրված չէ դրանից: Պետք է լինել զգոն, պետք է պարբերաբար հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, պետք է լինել իրազեկ ու պաշտպանված:

Հիշենք, որ մեր անտեղյակ լինելն ու սխալ վերաբերմունքը կարող է մարդկային կյանք արժենալ:

2015թ.-ի դեկտեմբերի 1-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, ՁԻԱՀ-ի խնդրի ջատագովության և հետազոտության խմբի հետ համատեղ միջոցառումների իրականացման շրջանակներում, Երևան քաղաքի «STOP» ակումբում կազմակերպեց ռոք համերգ՝ նվիրված ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան: Միջոցառմանը հրավիրված էին ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելման գործունեությամբ զբաղվող ՀԿ-ներ եւ այլ ոլորտի ներկայացուցիչներ ու անհատներ:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց այն ծրագրերը, որոնք իրականացվում են Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում եւ կոչ արեց բոլորին լինել իրազեկ եւ նախաձեռնող ՄԻԱՎ վարակի փոխանցման եւ կանխարգելման, ինչպես նաև սեռական առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու հարցում:



ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Ներկաներից ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագրերի ղեկավար Լենա Նանուշյանը ներկայացրեց ՄԱԿ-ի բարի կամքի դեսպան Վերա Բրեժնեվայի սոցիալական գովազդի մասին եւ նրա կոչը՝ «վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում», որից հետո ցուցադրվեց նրա սոցիալական տեսահոլովակը:



Միջոցառման ժամանակ ներկայացվեց ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում աշխատող կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպվեց խաղ-վիկտորինա, որի նպատակն էր բարձրացնել մասնակիցների իրազեկվածության մակարդակը ՄԻԱՎ-ի

վերաբերյալ: Միջոցառման ժամանակ ներկա էին թվով 90-100 անհատ: Վիկտորինա խաղի ժամանակ մասնակիցները շատ ակտիվ էին ու փորձում էին ճիշտ պատասխան տալ հարցերին, պատասխանելուց հետո ոլորտի մասնագետները հստակեցնում ու պարզաբանում էին տալիս հարցերի



պատասխաններին: Ճիշտ պատասխանելու դեպքում նրանք ստանում էին մրցանակներ:

Ողջ երեկոյի ընթացքում բոլոր հյուրերը ունկնդրում էին ռոք խմբերի կատարումները, որը նաեւ ուղիղ հեռարձակվում էր «Աշխուժակ» առցանց ռադիոկայանով:

Միջոցառումը համարվում է կայացած, քանի որ երիտասարդները շատ հետաքրքրված էին եւ միեւնույն ժամանակ շատ մոտիվացված:





ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Միջացառման համագործակից կառույցներն էին՝

- ✓ ՄԱԶԻԱՀ
- ✓ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ
- ✓ «Կանանց Ռեսուրսային Կենտրոն» ՀԿ
- ✓ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ



ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Սկսած 1988թ.-ից Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաձեռնությամբ ողջ աշխարհում դեկտեմբերի 1-ը նշվում է որպես ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր՝ խնդրի նկատմամբ հասարակության ուշադրությունը գրավելու, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին հակազդման գործում նոր կազմակերպություններ, խմբեր և առանձին անհատներ ներգրավելու նպատակով: Սկսած 2011 թվականից մինչև 2015 թվականը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն անցկացվելու է «Հասնել Զրոյի» կարգախոսով:


Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումն ըստ փոխանցմանուղիների.

Հետերոսեքսուալ փոխանցման ուղի	64,5%
Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով	26%
Հոմոսեքսուալ փոխանցման ուղի	2,6%
Մորից երեխային	1,7%
Արյան միջոցով	0,2%
Անհայտ	5%

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 1140-ի մոտ (կին՝ 289, երեխա՝ 24) ախտորոշվել է ՁԻԱՀ, ընդ որում 172-ի մոտ՝ 2014թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ով հիվանդների մահվան 495 դեպք: Մահացածների թվում կան 85 կին և 8 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով գրեթե բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ, իսկ գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (96,7%):

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է Երևանի բնակիչների շրջանում՝ 723 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 32,7%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 11,4%: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց էտալիս, որ ամենաբարձր



ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ցուցանիշը Շիրակում է՝ 100,7, որին հաջորդում են Լոռու, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերը համապատասխանաբար 93,3; 69,6; 69,6:

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3800:

ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15-49 տարիքային խմբում 0,2% է:

